

ԴԻԻԱՆ ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲԱՅ

ԼԲ

(Ընկալալոգիր ատան նազար ալախնու կրուտի):

Պատճառ ձեռագրիս այս է, որ ես Համ-
թեցի Սոճա Մալիճանի քոյրորդի կարա-
պիս՝ կամակցութեամբ քեռորդոյս Ազամ
Ձէլէպուն թվին Ռձժե (= 1666) ի քա-
ղաքն Ըստամպոլ վէքիլ եղէ առաջի բազ-
մայ Պէլլըղատցի Արբահամ Ձէլէպուն եւ
նորին Արբահամ Ձէլէպուն փոլիցայինն,
այսինքն ձեռագրոյն, եկի ի սուրբ քաղաքն
Երուսաղէմ դեկտեմբերի ամսոյ ի Ա. եւ ի
նոյն օրն առեալ ընկալայ ի մէջ Սուրբ Յա-
կոբայ վանացն ի Տէր Եղիազար հոգեւոր
տիրէն [յ]անուն Արբահամ Ձէլէպուն տասն
հազար երեսով աւանդի դոչ, զի վասն
դրամի եղև փութանակի գալուստն իմ. եւ
եառ զայս թուղթս վանից խոստովանա-
հայր Տէր Առաքելին իւր գրոյն Տէր Եղիա-
զար հոգեւորտիրին, զի ի զիպող ժամուն
տեսողացն հաճոյ լիցի. բաւ է:

Սորին վկայք այս են.

ՆԵՐՍԷՍ ԵՊՍ. ԿԵՍԱՐԱՑԻ ԱՄԻՐՔԱՆԻ
ՈՒՐՀՍՅԵՑԻ ՄԱՐԿՈՍ ԵՊՍՆ. ՈՐԴԻ
ԿԱՐԱՊԵՏ

ԼԳ

(Ապրօ Ձէլէպի առ Եղիազար կաթողիկոս):

Հասցէ յերկրպագութիւն գարշապարին
սուրբ Եղիազար կաթողիկոսին ամենայն
հայոց: Պէնքմ էֆանտըմ սուլթանըմ, Տիար-
պէքիբտէն եաղըլան մէկթուպի շէրիֆընըզ
պու գուլընսուգա վասիլ օլուփ, վէ պուլուր-
միշընըզ քի Մարտիրոս թէքրար մուքա-
րէրէթի կօրտըմ, լաքին օնըն էմրի սէնին
պէրաթըն պօզամագ, զիրա պէրաթ պէ-
րաթի պօզար էմմա՝ նէ լէլըմ սիզ ելընըզ-
տէքի պէրաթի իլէթթմայ կատըր տէկիլսը-
նըզ, քօրկարսընըզ. հէլայ օյլէ օլմիշ նէ
լիաըմ: Շինաի պիզ թէքրար մքարար էթսէք
յէթ տէկիլ տըր, քօյ տուրսուն. վէզիլէա-
ղէմ չըքաչակընայ եաքըն էա՝ տէրըզ, վէ
սիզի Ըստամպոլայ կէտասընըզ տէի ըէճայ
էթմիշ օլ քօփէքիլէր: Ձէնէհար, զէնէհար,

կիթմէսընըզ, օթուրըն Ուրֆայտայ, Հէլէպ-
տէ սահըն օլուփ պիզ չիքինչէ: Աստուած
իւր աջօնը քեզ պահապան լինի, էկէր պիւր
մազուլ իլէ խաղաղութիւն էտէ պիւրըսէն
զՄարտիրոսլէ՝ յէլան չալըլընըզ Մարտի-
րոսի գօլունըզայ ալմայ. եօխսէ սաքըն վէ
սէքըն Ըստամպոլայ կիթմէն. էկար Ըստամ-
պոլայ կէլըրսէնըզ կաթլանըն զատիկտէն
սօնկրայ թագաւոր Սէլանիկէ յէնկիլէհրայ
կէլաճակտըր, օլ զաման Ըստամպոլայ կէ-
լըրսընըզ, պէլքի էլամ չէքըլմէզ: Ապայ
քանի որ թագաւորն էտրանայ է, Ըստամ-
պոլ մի գնար: Դարձեալ իմ հոգուն հոգի,
Երբոր զիս քո չար պատահման դէմ էս դրեր,
ինչո՞ւ համար զիմ ըստալին չես զրկեր, ո՞ւր
է քո իխարան, ո՞ւր է քո զօլին, հէլպէթ
հէլպէթ զիմ ըստակն զաթըրճի Սէֆարին
հեան զրկես Ըստամպոլ, որ որդույս Մա-
թոսին թէսլիմ լինի, թէ նորն թէ հինն. իմ
աչաց լո՛յս, ինձի զուլում արիւր, այսչափ
ժամանակ է զիմ ըստակս պահեցիր. ես
քէնէ գայս ումիշ չէի աներ. ապայ ձեռնէս
լի՞նչ կուգայ, էմըն Աստուծոյ է: Թէ որ իմ
կողմն հարցանես, ես զքեզ քանի ի մարմնի
կամ՝ ձեռաց չեմ թողուր, միթէ քո սուրբ
աղօթոյն Քրիստոս յօգնութիւն անէ: Դար-
ձեալ իմ հայր սուրբ, Հալպայ Դանտի գա-
տայէին համար, որ կօմրուկի քէթիպ լինի
զրեր ես, ան կու լինի, կ'անեմ կու զրկեմ,
բայց ան էսամին կու վախեմ որ չի լինիր:
Մինչեւ հիմա երկուքն այլ գրեանքն կու
զրկէի, ապա, հայր սուրբ, չորս ամիս
ծանր հիւանդութիւն քաչեցի, քսան օր է
որ օտից վրայ եմ ելիր. դուն գիտես որ ես
քո բանին պատճառօնը անցայ այս դարի-
պութիւնս կու քաչեմ, թէ ոչ սուրուսըր
չկայ, ինչ բան ունիմ հոս: Ըստամպոլ կ'իր-
թայի, ապա խայմախամէն կու վախեմ:
Պուստան սօնկրայ այս ինչ ինսաֆուզու-
թին է որ քո հրամանը իմ ըստակն չես
զրկեր. բաւ է: Իզաթիլ ճանի ազիլըմ,
օկլում, սուլթանըմ Սուքիաս հայրապետէ
Էշգիյաքէլէր իլէ, աէրուն հասրաթ իլէ սէ-
լամ օլունուր. պէնքմ իչըն հոգեւորտիրէ
սօլայմընըն քի պէնքմ ահէճի կօնտուրըն.
խաւշ խաւշ օսկլըր սէմ պէն սէնին իլան
սօլալըրըմ: Ձեր ամէն փոքրաւորաց երկըր-
պագութիւն:

Դրեցաւ Փետրվարի Ժբ. [1667]. Պէնտէի
Արթօ:

ԼԴ

(Երուսաղեմի միաբանի սու եկիպար կարողիկոս Ի Տիմիթ): (*)

Արբազան հորդ մերում եւ լուսաւոր-
 չածին երամոցս, վեհիդ սանս սրբոյ միա-
 բան ծառայք քո խոնարհեալ, երես ի գետ-
 նի եղեալ եւ ընդ երկրաւ մածեալ՝ մատու-
 ցանեմք ողջոյն եւ համարոյ յերկնաչու սուրբ
 գարշապարացդ եւ հարցանեմք զորպիսու-
 թենէդ քումմէ, զճանապարհի յոգնաշխատ
 կրիցն եւ զաշխատանացն, զոր եւ Աս-
 տուածն ամենայնի տէրն մեր Երուսա Գրիս-
 տոս բարեաւ եւ խաղաղութեամբ յաջողեա-
 ցէ զստաջիկայ գործս եւ զուղեգնացու-
 թիւնս քո, եւ զգարծն քո շեշտակի յաջողու-
 թեամբ ժամանեցուցէ սու տարագրեալ որ-
 գեակդ քո: Բայց առ սակաւ յետ գրիս՝ զայս
 ծանուցանեմ քան զամենեսին յետնեալ ծա-
 ռայ քո Եղիսս, զի յորժամ ելեալ ի Տէր
 Մինասի պաղչիցն՝ գնացիր, ի նոյն պահն
 Հալպայ գիրն եկն հրամանուցդ. կնքեալ են
 ի վերան գրեալ լատին եւ հայ գրով՝ թէ ի
 ձեռս քո հասցէ անբաց յուժեքէ, եւ սային
 Ֆոանգաց լինելոյ յաղագին՝ տարեալ ի վէ-
 քին էր տրեւալ, եւ ի միւսում օրն վագ-
 վաղակի թարծխմանի ձեռովն ի Մնուեղն էին
 ուղարկեալ, կարծելով՝ թէ դու ի Մնուեղն
 ես, եւ ոչ զտաննէն զքեզ ի տեղն՝ մեք շատ
 ասացաք՝ թէ տուէք որ մէկ մի ճարենք
 ողարկենք. չլսեցին՝ թէ մինչ որ չխմանանք
 զտեղն որ ի նա թէսլիւմ անենք, մարդոյ
 չենք իտար. վասն որոյ այսքան եղեւ յա-
 մեն զրիդ. եւ վետրուարի իդ. օրն զԴթի-
 եկն հրամանուցդ. օրհնութեան զիրն եւ
 պատուէրն, ապա թէ իմացաք ուր գնալդ
 եւ ուր լինելդ, եւ մինչ ցայն վայր ոչ ոք
 գիտէր: Եւ ապա վէքիլն կրկին սայի բոնեալ
 ուղարկեաց զգիրն առ քեզ եւ բնաւին չկա-
 րացաք իմանալ մեք՝ թէ զԹնչ զիր է եւ
 կամ ուսով է, թէ հնար իցէ՝ ծանուցես
 ծառայի քո, հայր սուրբ: Եւ քանի որ հրա-
 մանքդ գնացեր ես՝ երեք չորս անգամ զիր
 եկաւ ի Շամայ Սարգիս իրիցէն, կլլմպօզի
 Շամ գնալն եւ ի քեանիւնան մտնուլն, աւելի
 պակաս հաչմչէրն, եւ կամ թէ քեզ շանն

եւ հոմանեացն չարախօսին ի քէն, եւ կամ
 թէ Բստամպօլու Մազա պիղծն եւ այլքն
 նման նորա զիր գրկին ի Շամ՝ թէ տեսէք
 եւ իմացէք մեռնն եկից՝ մի եւ փաշան
 քանի՞ քիսա ճուռում առաւ յիւրմէն եւ
 զգատիկն յերուսաղէմ կանէ կու մընայ
 մի: Այսպիսի գրեր նոքա Շամ ուղարկեն
 եւ սոքա ի Շամայ զպատուսանին յԵստամ-
 պօլ կ'ուղարկեն: Եւ եւս յունուարի իե,
 կրկին յԵստամպօլ սոցա ի Շամ զիր եկեր՝
 թէ ինչպէս արիք. սոքա ուղարկով թէք-
 րար թուղթ են գրած՝ թէ երեք չորս անգամ
 փաշան չաւուշ թային արար ի վերան՝
 չկարաց բերեր էր. բայց շատ գրամէ հա-
 նեցին չաւուշին զինքն: Եւ դարձեալ Սար-
 գիս երէցն գրեր էր՝ թէ Սուլէյման աղան
 քո զայրէթն շատ քաշեց, վեց քիսա սուլֆ
 արար, թէ զվեց քիսան ուղարկես՝ քեզ
 բազում շահ կու լինայ. քո գնալն դեռ
 չգիտէին մինչե ցայժմ, եւ յաւուրս ի վեր
 ոչ գիտեմք թէ այլ ինչ գիր եւ գրուց տի
 դայ, յորժամ լսեն զգալն քո: Եւ տեղացս
 մօլլան, երկրորդում աւուրն յորժամ հրա-
 մանուցդ գնալն ձայնեց, եւ կ'պակաս գրուց
 շատ ասաց. երբեմն ասաց՝ թէ ինչո՞ւ ինձ
 տանըմիջ չեղեւ, որ նորա արդ մէհսեր
 տայի, եւ երբեմն դարձաւ՝ թէ ֆիրար էթ-
 միչ, հօճէթ իտէրիմ. մինչ որ գնացաք ի
 Յունաց պատրիկն, որ նա զթէրծխմանք ու-
 ղարկեց մէհքէմէն, երեք չորս օր մօհլէթ
 առաւ, մինչ իմանանք՝ թէ յո՞ւր է եւ կամ
 խապէր մի առնունք, եւ թէ վերեք օրն
 անցնին՝ ես եմ նորա տաւածին, զի լծակից
 իմ է: Եւ յետ երեք աւուրն տեսաք որ չէր
 լինար, մէկ՝ որ ուխտաւրք եկին յիսուն
 վաթսուն հոգի, եւ մէկ այլ՝ որ նա ի վե-
 րայ տանս լեղու կ'արձակէր. հարկեցին
 միաբան եղբարքս, տարան Յունաց մեծի
 մօան եւ ասին՝ թէ զիր եհաս ի մեր մեծէն,
 որ զսա վէքիլ անէք, ապա թէ գնացաք
 մօտ ի մօլլան հանդերձ: Գնաց թէրծխման-
 ներովն՝ թէ անա՛ աչուհետե Հայոց վանից
 վէքիլն սա է, իւր մեծէն հրաման սորա է
 եղեր վէքիլութեան, ապա թէ զձայնն կրա-
 րեց: Եւ այժմ հրամանաւ Տիստոյ իմում,
 թէ՛ ծառայ քո եւ թէ այլ եղբարքս իմ ի
 վերայ պատուիրեալ հրամանացդ կամք ա-
 լասիկ ծառայութեան մտեմարար սիրով
 հուզով չափ: Եւ զուխտաւորաց ճանապար-
 հի էնգալն վասն խաֆարի՝ բնաւ մի հար-

(*) Ընդօրինակութեան մէջ նամակիս վերնագիրն է. «Երուսաղեմայ միաբանից գիրն է, որ կին ի Տիմիթ»:

ցաներ, թէպէտ գիտակ իսկ ես, ամա այսպիսի հզեալ ոչ էր իսկի, քանզի մարդոյ գլուխ գերեսունն անցեր եւ Համա՝ Համուս թալաներ են, Համուս՝ ութ, և Համա՝ հինգ եւ զծեծն աւելի ի վերայ նոցա. հրամանքդ գիտես, ճար մի արա:

Գրեցաւ փետուարի ԺԳ. յաւուր Տեառնընդառաջի [1667]: Անարհեստ յետնեալ նիկոլոս՝ այաք թուրապիս մի մոռանայր: Ըստամպօջու Աստուածածնայ ժամուն երեսփոխան Բրիտանոստորի տաճիկ եղբայրն, որ Մարայ խաղնայի հետն էր, խաղնա աղասուն քէհիին քէհեան է, եկաւ յերուսաղէմ յԸստամպօջու, մէսուու մի հանեց՝ թէ երեք չորս անէմ կախեցին. զտուն եւ զերան ոչ գիտեմք եւ ոչ պատճառն:

Հրասարակեց՝ Մ. Ե. Ն.

ՈՒՂՆԵԼԻՔ. — 1940 ՏԱՐՈՂ ՍԻՈՆԻ մէջ երես 31 էր. տղ 38՝ վարդանի կարգալ՝ վարդանիս: Երես 317 էր. տղ 44՝ տնուց մի կարգալ տնուց իմ: Երես 318 ա. տղ 23՝ գիտեմ կարգալ զասենմ:

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

ԼԱՆՁԱԽԱՍՏԻ ՏՈՒՌՈՒՅՈՒԹԻՒՆ

Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, 16 Հոկտ. 1940ին, լանջախաչ կրելու արժօնութիւն ընդհան եր, 1934ին՝ Հոգեւոյ Տ. Թորոզ Պատրիարքին վարդապետական ձեռնադրութիւն ընդունած չորս միաբան վարդապետներն (Պարոյր Վրդ. Մինասեան, Յուսիկ Վրդ. Աւետիսեան, Պաակ Վրդ. Թումայեան եւ Միւռոն Վրդ. Կրնիկեան) վերջին երեքին: Հոգ. Տ. Պարոյր Վրդ., Կիպրոսի Մելգոնեան հաստատութեան Հոգեւոր-Հովիւ, եւ զպարբին առաջնորդական փոխանորդ եղած միջոցին, ընդունած էր արդէն լանջախաչ կրելու արժօնութիւնը, երջանկալիտասակ Տ. Սահակ Վեհ. Հայրապետի հրամանաւ, եւ Ս. Արթուրոյ Ամեն. Ս. Պատրիարք Հօր հաւանութեամբ:

ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ ՀԱՅՐԱՊԵՏԻ

ՏՕՆԱԿԱՆՔ ԵՒ ԲԵՄԱԿԱՆՔ

Սուրբ Արթուրոյ Ամենապատիւ Ս. Պատրիարք Հայրը 1941 Յանուար 16 եւ 17 քրտականով հետեւեալ երկու հեռագիրները ընդունեցաւ Ամենայն Հայոց Հայրապետութեան Տեղակալ Տ. Գեորգ Արեւիպիկոպոսէ՝ երեսունհինգ տարեկան:

«Կը խնդրենք հեռագրել Փարիզ՝ Էսմէրանին, որ անմիջապէս կատարուի եւրոպայի թեմերու երեք պատգամաւորներու ընտրութիւնը: Հետեւանքի մասին տեղեկացուցէք՝ հանդերձ լուսաբանութեամբ»:

«Կը խնդրենք հեռագրել Գահիրէի, Պաղտատի, Աթէնքի, Սէլանիկի եւ Մարտէշի առաջնորդարաններուն, որ անմիջապէս ընտրեն իրենց պատգամաւորները: Հետեւանքի մասին հեռագրով տեղեկացուցէք էջմիածին՝ հանդերձ լուսաբանութեամբ»:

Ս. Պատրիարք Տեղակալ Սրբազանի սոյն յանձնարարութեանց համաձայն, հեռագիրներ ուղղեց յիւրեալ առաջնորդարաններուն եւ Փարիզի եկեղեցական վարչութեան ասեմակէ Տեղապետ Պօղոս Էսմէրեանի, որ երեկայիս կը գտնուի Վիւր, եւ այս մասին հեռագրով տեղեկացուց Ս. Էջմիածին:

* 1 Դեկտ. Կիր. — Ս. Պատրիարք մատուցեցաւ ի Ս. Հրեշտակապետի Բարոզեց Տ. Պարզեւ Վրդ., ընարան առնելով հետեւեալ խօսքը. «Ձի օրէնքն ի ձեռն Մովսիսի տուան, շնորհք եւ ճշմարտութիւն ի ձեռն Յիսուսի Բրիտանոսի եղին»: Յոյց տուաւ Հին Օրէնքը իբրեւ աստուածային պատուիրաններու ամբողջութիւն, իսկ նորը՝ զերազանց միջոց փրկութեան եւ ազատագրման: Նոր Ուխտը հոգեւոր առաքելութեանց գործադրութիւնը կը պահանջէ: Օրէնքը պահելով՝ յարգած կ'ըլլանք մեր ներքին եւ բարոյական կեանքը:

* 2 Դեկտ. Դշ. — Ս. Կուսի Ընծայման տօնին առթիւ, Միաբանութիւն եւ աշակերտութիւն, հակառակ աննպաստ եղանակին եւ անձրեկին, շքերթով իջան Դիմասմանի ձորը: Ամեն. Ս. Պատրիարք Հօր նախագահութեամբ կատարուեցաւ «Հրաշափառոյ մուտքը Աստուածածնայ Տաճարէն ներս: Այդ մատուցուեցաւ հանդիսաւոր Ս. Պատրիարք, որու ընթացքին քարոզեց Տ. Սեբովրէ Վրդ., բացատրելով ընծայարբերութեան նշանակութիւնը իբրեւ իւրաքանչիւր Աստուծոյ կամքին, իբրեւ պատրաստակամութիւն՝ տեղ ապուր, իր սրտին մէջ, Աստուծոյ քիտղ զգացումներու: Եւ ներկայացուց Ս. Կոյսը իր առօրեայ կեանքին մէջ իսկ, ուր իր խօսակցութիւնները Աստուծոյ զգացումն են լեցուած, որուն պատճառաւ իսկ արժանի եղաւ հաւատարմութիւնը եւ Աստուծոյ Որդւոյն մայրութեան պատիւին:

* 3 Դեկտ. Կիր. — Ս. Պատրիարք մատուցուեցաւ ի Ս. Յակոբի Բարոզեց Տ. Նաւարշ Վրդ.: